

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ

## ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՔԱՐՈՉՆ ՈՒ ՊԵՆԱՍՏՈՒՄԸ ՎԵՐԱՄՆՎԱԾ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (1929–1949)<sup>1</sup>

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պոլսահայ, փարիզաբնակ, անվանի քննադատ, բանասեր, թարգմանիչ, լրագրող եւ հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի (1872–1954) խմբագրած ազգային, գրական-գեղարվեստական «Անահիտ» հանդեսը, հիմնադրվելով, բացառիկ նշանակություն է ունեցել հայ պատմամշակութային կյանքի տարեգրության մեջ: Շուրջ երեսուն տարի լինելով ասպարեզում՝ պարբերականն անփոխարինելի դեր է խաղացել հայ մշակույթի, գրականության եւ գեղարվեստի զարգացման գործում: Հանդեսի հրատարակությունն սկսվել է 1898 թ. Փարիզում եւ երկար ու համեմատաբար կարճատեւ ընդհատումներով շարունակվել մինչեւ 1949 թ.: Այն ունեցել է հրատարակության երկու շրջան, առաջինը՝ 1898–1911 թթ., եւ երկրորդը՝ 1929–1941 ու 1946–1949 թթ.: Սակայն եթե «Անահիտի» առաջին շրջանի գործունեությունը դարձել է առանձին հետազոտության նյութ<sup>2</sup>, ապա հանդեսի երկրորդ շրջանը հատուկ ուսումնասիրության առարկա դեռ չի եղել: Առանձին բնութագրական գնահատական չի տրվել նաեւ «Անահիտի» երկրորդ շրջանում տեղ գտած արվեստագիտական ուսումնասիրություններին:

Իհարկե, տարբեր հեղինակներ այս կամ այն չափով անդրադարձել են այդ հետազոտություններին, սակայն այդ գնահատականները կամ դիտարկումները, ավելի հաճախ լինելով ակնարկային, գրված բանախոսությունների ոճով կամ ընդհանուր գնահատանքի մակարդակով, չեն ապահովում հանդեսի երկրորդ շրջանի մշակութային լայնածավալ ու բազմաբնույթ գործունեության ամբողջական նկարագիրը, մասամբ են բացահայտում նրա գեղարվեստական բովանդակ նշանակությունը:

<sup>1\*</sup> Ստացվել է՝ 2.12.2024, գրախոսվել է՝ 11.12.2024: Էլ. հասցե՝ avagyan.vachik@yandex.com:

<sup>2</sup> ՏԷՄ ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, «Անահիտ», Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 1999, 228 էջ:

Մենք փորձել ենք որքան էլ հակիրճ, այնուամենայնիվ առավել հիմնավոր ներկայացնել «Անահիտի» գործունեության երկրորդ շրջանի արվեստագիտական-գեղարվեստական բովանդակությունը, ծանոթացնել մասնավորապես հայ մշակույթին նվիրված անդրադարձներին:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

«Անահիտի» երկրորդ շրջանում ամփոփված գեղարվեստական նյութն ընդգրկում է բավական լայն շրջանակ՝ առնչվելով մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառներին, որ եւ ներկա ուսումնասիրության առարկան է:

Պատմական նոր կացության՝ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի եւ Սփյուռքի տարանջատ գոյության պայմաններում հայ մշակույթի ներկա վիճակի եւ զարգացման հետագա ուղիների հարցը Արշակ Չոպանյանին հուզող ամենաէական խնդիրներից էր: Ամենատարբեր առիթներով հանդեսի խմբագիրը հանգամանորեն քննության է առել այդ հարցը, ընդհանրացումներ եւ առաջարկություններ արել՝ առավելագույն նպաստ բերելով մասնավորապես Սփյուռքում հայ մշակույթի խթանմանն ու զարգացմանը: Ամենայն ուշադրությամբ հետեւելով արվեստի նորություններին՝ Չոպանյանը հանդեսի էջերում անդրադարձել է դրանց, հրատարակել արվեստագիտական ուսումնասիրություններ, հոդվածներ, վերատպել արվեստի բազմաթիվ գործեր եւ նմուշներ, քարոզել ժամանակակից հայ գեղարվեստի նվաճումները, գիտական-արվեստաբանական նյութերի թարգմանություններով ընթերցողին ծանոթացրել հայկական արվեստի եւրոպական գնահատումներին: «Անահիտի» արվեստի բաժնին աշխատակցել են հայ եւ համաշխարհային մշակույթի բազմաթիվ նշանավոր դեմքեր:

Ներկա հետազոտության մեջ հիմնականում նկարագրական, վերլուծական եղանակների կիրառմամբ փորձել ենք շրջանառության դնել «Անահիտում» հայ մշակույթին ու արվեստին նվիրված նյութերը, հայ արվեստագետների ստեղծագործական գործունեությանը, առնչություններին վերաբերող բազմաթիվ հոդվածներ:

«Մշակույթը հոգին է ազգերուն»<sup>3</sup>, – իրավացիորեն կարծում էր Ա. Չոպանյանը՝ համոզված, որ թվով ու քաղաքական կարողություններով

<sup>3</sup> Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Ցեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիվ 1, էջ 5:

փոքր ազգերն իրենց ծնած հարազատ հանճարների շնորհիվ, ինչպես փաստում է նրանցից շատերի պատմությունը, դարձել են զորեղ ու մնայուն: Երբեք չի կարելի վիճարկել այն ազգի գոյությունն ու ապագան, որն ընդունակ է ծնելու հանճարներ, գրական-գիտական, արվեստագետ տաղանդներ: Սակայն կա մի կարեւոր նախապայման. երբեք չխզել կապերն անցյալի հետ: Այստեղից էլ բխում է Չոպանյանի ծանոթ ծրագրային դրույթը, որը հնչում է որպես պատգամ հայության բոլոր սերունդներին. «Ճանչցնենք ճշգրտորէն մեր նոր սերունդին ինչ որ մեր հին նախահայրերն ըրեր են քաղաքակրթութեան համար, ինչ որ երէկուան ու այսօրուան հայ մտքի տաղանդաւոր ներկայացուցիչները կը շարունակեն ընել. զօրացնենք մեր երիտասարդութեան մէջ իր հաւատքը ցեղին արժէքին վրայ, մղենք զայն սիրել իր ցեղը՝ իբր մարդկութեան մտաւոր ուժերէն մին, խրախուսենք այդ մտաւոր ուժն ամենցնելու նուիրուած ո եւ է ճիգ որ մեր մէջ կը յատնուի...»<sup>4</sup>:

Արշակ Չոպանյանը վերածնված «Անահիտը» անվանեց «Հանդէս մտածման եւ արուեստի»: «Արուեստը վեր է բոլոր քաղաքական ու ընկերական վէճերէն, կուսակցական ու յարանուանական տարախոհութիւններէն: Ան մեծագոյն կապերէն մինն է, որ՝ քաղաքակիրթ բարձր ազգերու մէջ՝ գաղափարներով իրարմէ տարբեր բոլոր մարդիկը կը միացնէ...»<sup>5</sup>,— համոզված գրում է նա Կոմիտաս Վարդապետին նվիրված իր հոգևածններից մեկում:

Ինչպես «Անահիտի» առաջին շրջանում<sup>6</sup>, այնպես եւ այժմ Չոպանյանը յուրաքանչյուր ժողովրդի կենսունակության ու լինելիության առանցքային կռիւներէն մեկը իրավացիորեն համարում էր ազգային մշակույթը՝ մասնավորապէս հայերիս համար, եւ այն գնահատում իբրեւ գոյության կարեւորագոյն գործոններից. «Այդ ուժը, որ գերագոյն ուժն է,— ուժին ամենէն բարձր, գեղեցիկ ու բարի ձեւը,— ոչ ոք կրնայ խլել մեզմէ, ոչ ոք կրնայ զայն ճեմիշի (պարսկ. čemše) հարկաւորութեան տեղ,— Վ. Ա.)<sup>7</sup> մէջ

<sup>4</sup> Անդ, էջ 6–7:

<sup>5</sup> Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս–օգոստոս, թիւ 1–2, էջ 103:

<sup>6</sup> Տէս Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Գերագոյն ուժը, «Անահիտ», Փարիզ, 1910, մարտ–ապրիլ, թիւ 11–12, էջ 241:

<sup>7</sup> Տէս ԱՍ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչութիւն, 1944, հտ. 3, էջ 207:

խեղդեի: Այդ ուժը ոչ մէկուն դէմ ուղղուած չէ, այլ դրուած է ի սպաս, ի հաճոյս, ի փառս ամբողջ մարդկութեան: Լաւ ճանչնանք այդ ուժը մեր մէջ, եւ գիտակցօրէն աշխատինք զայն զարգացնել, ընդլայնել, զօրացնել...»<sup>8</sup>, — գրում է Զոպանյանը եւ ուղերձ հղում հայ երիտասարդութեան օժտված ու կենսալից տարրերին. «Հող չկայ յուսախաբութիւն: Այդ է ճամբան որ կ'առաջնորդէ բարոյական մեծութեան եւ որ ցեղին ֆիզիքական զօրութիւնն ալ ամրացնելու ամենէն ապահով միջոցներէն մէկն է, թերեւս գլխաւորը»<sup>9</sup>:

«Անահիտում» հայ արվեստին եւ արվեստագետներին վերաբերող նյութերը հիմնականում տպագրվում էին «Լրատու արուեստի եւ գրականութեան Հայաստանից եւ Կովկասից», «Արուեստի լրատու Հայաստանից եւ Կովկասից», «Մեծ արուեստագէտները» (Եւրոպայի նշանավոր նկարիչների եւ քանդակագործների մասին. — Վ. Ա.), «Մեր արուեստագէտները», «Հայ հին արուեստ», «Հայաստանի արուեստագէտները», «Հայ արուեստագէտները արտասահմանի մէջ», «Մեր արուեստագէտները արտասահմանի մէջ», «Մեր մտաւորականներն ու արուեստագէտները արտասահմանի մէջ», «Հայ արուեստագէտներ», «Տպաւորութիւններ ու յիշատակներ Խորհրդային Հայաստանէն», «Հայկական քրոնիկ», «Տեղեկատու հրատարակուած գրքերի» խորագրերով բաժիններում, ինչպես նաեւ դրանցից դուրս՝ առանձին հոդվածներով<sup>10</sup>, եւ անշուշտ խմբագրի նախասիրած բաժնում՝ լրագրային քրոնիկներում, որոնք, իր իսկ գնահատմամբ, սովորական հրապարակագրութիւններ չէին, այլ գրական արտագրութիւններ<sup>11</sup>: Այսպես, օրինակ, 1930 թվականի 4-րդ համարում՝ «Լրատու գրական-

<sup>8</sup> Ա. Զօպանյան, Քրոնիկոն, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 3-4, էջ 164:

<sup>9</sup> Անդ, էջ 164-165:

<sup>10</sup> Տէս Ա. ՍԱԳԸԶԵԱՆ, Կ. Պոլսոյ հայ ոսկերչութիւնը. ԺԸ.-ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 9-15, ՍԱԳԸԶԵԱՆ Ա., նշ. աշխ., Բ. (շարունակութիւն եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 39-51 (այս հոդվածը, ինչպես տեղեկացնում է հեղինակը, ավելի համառոտ լույս է տեսել 1924 թ. մարտին «La Renaissance de L'Art Francais» գեղարվեստական հանդեսում՝ «L'Orfèvrerie Arménienne à influence occidentale de Constantinople XVIIIe aux et XIXe siècles» վերնագրով. տէս Ա. ՍԱԳԸԶԵԱՆ, Կ. Պոլսոյ հայ ոսկերչութիւնը. ԺԸ.-ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1930, յունուար-փետրուար, թիւ 5, էջ 9): Նաեւ Զ. ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ, Յովսէփ Փուշման, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 57-63, ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՏՐԱՊԵՋՈՆԻ, Հայ վրձինը եւ «Ամենալի բուրաստանը», «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 95-99, ՖԻԼՈՆ, Յակոբ Կիրճեանի քանդակագործութիւնը (1), «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս-հոկտեմբեր, թիւ 1-2, էջ 154-155, ՌԸՆԷ-ԼՈՒԻ ՓԻԱՇՕ, Մորիս Սարգիստի, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932 — ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 154-164:

<sup>11</sup> Տէս Ա. Զօպանյան, «Անահիտ»ի ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 44:

նութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից» խորագրով, հանդեսի թղթակից Կարեն Միքայելյանը ոգեւորությամբ մանրամասն ծանոթացնում է խորհրդային հանրապետությունների մայրաքաղաքում՝ Մոսկվայում, տեղի ունեցած մշակութային օլիմպիադայի մասին՝ արտատպելով բազմաթիվ լուսանկարներ թատերական տարբեր, մասնավորապես Հայաստանի պետական թատրոնի ներկայացումներից։ Լուսանկարներում դրվագներ են «Խաթաբալայից», «Պեպոյից» եւ այլ հայտնի պիեսներից՝ Ավետ Ավետիսյանի, Հրաչյա Ներսիսյանի, Սուրեն Քոչարյանի, Վաղարշ Վաղարշյանի եւ ժամանակի անվանի հայ դերասանների խաղով<sup>12</sup>։ «Հայ թատրոնն այլ եւս, — ուրախությամբ գրում է թղթակիցը, — գաւառական թատրոնի մակարդակի վրայ չէ կանգնած եւ իր ստեղծագործութեամբ կարող է մրցութեան դուրս գալ լաւագոյն ռուս թատրոնների հետ»<sup>13</sup>։

Զոպանյանին շատ էր ոգեւորում այն, որ խորհրդային Հայաստանի կառավարութիւնը հայ արվեստի զարգացումը խրախուսելու եւ հայ ազգի վարկը բարձրացնելու նպատակով ժամանակ առ ժամանակ կազմակերպում էր ցուցահանդեսներ՝ նվիրված հայ տաղանդավոր արվեստագետների գործերի, ինչպես նաեւ մեր անցյալին առնչվող պատմամշակութային իրերի ներկայացմանը ոչ միայն հայրենիքում, այլեւ նրանից դուրս, ինչպես, օրինակ, Մոսկվայում<sup>14</sup>, Թիֆլիսում, Լենինգրադում<sup>15</sup>։

Հետամուտ հայ գաղթավայրեր-հայրենիք մշակութային կապերի զարգացմանը, բնական է, հանդեսը հավասար ուշադրութիւն էր դարձնում եւ հետեւում թե՛ սփյուռքահայ եւ թե՛ հայրենիքում ապրող եւ գործող մանավանդ նորահայտ արվեստագետների ստեղծագործական ընթացքին։ Մեր ժողովրդին պատուհասած ահապոր աղետներից հետո Զոպանյանին հատկապես ոգեւորում էին արտասահմանում լայն ճանաչում ունեցող այն դեմքերը, որոնք իրենց «հանճարի փայլակներով» գալիս էին հաստատելու, թե ողջ է մեր ազգը եւ իր մշակույթով կենսունակ ու մրցունակ. «... երբեք պիտի չդադրիմ այս սրտապնդիչ իրողութիւնը մատնանիշ ընելէ-

<sup>12</sup> Տէս Կ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, Արւեստների օլիմպիադը Մոսկուայում, «Անահիտ», 1930, Փարիզ, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 41–60։

<sup>13</sup> Կ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, Արւեստների օլիմպիադը Մոսկուայում, «Անահիտ», 1930, Փարիզ, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 49։

<sup>14</sup> Տէս Ա. ԶՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ (ցուցահանդեսներ Երեւանի ու Մոսկուայի մէջ), «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5–6, էջ 28։

<sup>15</sup> Տէս «Արատու գրականութեան եւ արուեստի Հայաստանից եւ Կովկասից», «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 124։

մեր բզբտուած ազգին ծոցէն ելաւ ամբողջ բոյլ մը արուեստագէտներու որ յաջողեցան մրցիլ եւրոպական մեծագոյն ազգերու արուեստագէտներուն հետ եւ իրենց ինչպէս եւ իրենց ազգին անունը փառքով պսակեցին: Փարիզի պէս տիեզերական կեդրոնի մը մէջ, ոչ մէկ փոքր ժողովուրդ (մանաւանդ Արեւելքէն) ունի այսօր այնքան փայլուն գեղարուեստական տաղանդներու հոյլ մը, ինչքան հայ ժողովուրդը»<sup>16</sup>,— ոգեւորութեամբ գրում է «Անահիտի» խմբագիրը: Մեկ ուրիշ անգամ խանդավառված զանազան երկրներում ցրված տարագիր հայ նոր տաղանդները՝ իբրեւ «կազդուրիչ երեւոյթներ» ծնունդով եւ աճով՝ Չոպանյանը համոզված գրում է. «Այդ երեւոյթները ցոյց կուտան, որ մեր ժողովուրդը, թէեւ թուով նուազած, մտաւոր կորովի մէջ— այս հաստատումը կը կրկնեմ անգամ մը եւս— յառաջադիմելու, բարձրանալու վրայ է: Ամեն կողմ կը տեսնենք արուեստի մարզին մէջ— որ մարդկային գործունէութեան բարձրագոյն մարզերէն մէկն է,— հայ տաղանդներ որ կը փայլին, մերթ նորածագ յուսատու կամ արդէն իսկ ուշագրաւ ու սիրուն շողիւններով, ու մերթ համաշխարհային բեմին վրայ յաղթանակներ տօնելու կարող աստղերու ճաճանչումով»<sup>17</sup>:

Իսկ Բուխարեստում (Պուրէշ) բացված Հայ արվեստի ցուցահանդեսի կապակցութեամբ «Անահիտին» հասցեագրված մասնավոր թղթակցութեան հեղինակը, հանդեսին փոխանցելով բազմաթիվ մանրամասներ, ոգեւորված այցելուների, նրանց մեջ նաեւ Ռումինիայի թագավորի եւ թագուհու, իշխանների եւ տարբեր պետութիւնների դեսպանների, բարձրաստիճան պաշտոնյաների ու արվեստագետների եւ այլոց աննախագեյ ու բացառիկ ընդունելութիւնից, թարգմանաբար մեծաքանակ քաղվածքներ է մեջբերում ռումինական մամուլում տպագրված խանդավառ, մեկը մյուսին գերազանցող դրվատական գնահատականներից՝ փաստելով. «Առիթ մը պէտք էր անոր (ռումինացիներին.— Վ. Ա.) բանալու համար մեր հոգեկան գանձերը, եւ ցոյց տալու թէ Հայերս սուրճ խարկող, կօշիկ կարկտող, գորգ նորոգող, քիչ մըն ալ չարչի աս ժողովուրդը չենք միայն...»<sup>18</sup>:

Ինքը՝ Չոպանյանը, զմայլանքով ու ոգեւորութեամբ է գրում Կովկասյան Հայաստանից Ֆրանսիա տեղափոխված, Ֆրանսիայում մեծ հեղի-

<sup>16</sup> Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Մեր արուեստագէտները, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 99:

<sup>17</sup> Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.—դեկտ., թիւ 1—2, էջ 163:

<sup>18</sup> Պուրէշի հայ արուեստի ցուցահանդէսը (մասնաւոր թղթակցութիւն «Անահիտ»-ի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.—հոկտ., թիւ 3, էջ 107:

նակույթյուն վայելող գեղանկարչուհի, Ի. դարի ազգային կերպարվեստի պատմության մեջ լայն ճանաչման արժանացած առաջին կին արվեստագետի<sup>19</sup> Արմինիա Բաբայան-Կարբոնելի մասին, որ անվանի մանկավարժ, հասարակական գործիչ Սոֆյա Բաբայանի դուստրն էր։ Արմինիա Բաբայանի գեղարվեստական ճաշակը պայմանավորելով նաեւ տոհմիկ խառնվածքով՝ Չոպանյանը թարգմանաբար մեջբերում է ֆրանսիացի մի քանի քննադատների հիացական գնահատականներից քաղվածքներ՝ արտատպելով նկարչուհու նկարներից մի քանիսը<sup>20</sup>։ Ուշագրավ է, որ թեեւ համաձայնելով նշանավոր արվեստաբան Գյուստավ Կանի այն կարծիքին, թե՛ ինչպես էղգար Շահինը, այնպես եւ Արմինիա Բաբայանը թեպետ հայագգի, սակայն բացահայտ եւ որոշակի կապ չունեն հայ եւ ընդհանրապես արեւելյան մտայնության եւ զգայնության հետ. «երկուքն ալ հզորապէս փարիզցիացած արուեստագէտներ են», Չոպանյանն այնուամենայնիվ կարծում է, որ առկա է դարավոր տառապանքների ենթարկված հարազատ ցեղի ապրումների սարսուռը, որը նկարիչներին մղել է դեպի կյանքի ցավագին ու տխուր տեսիլների թարգմանությունը<sup>21</sup>։ Այս կերպ Չոպանյանը դարձյալ հաստատում է, որ արվեստագետի եւ նրան սերող ազգի միջեւ գոյություն ունեցող հոգեւոր կապն անխզելի է, օտարությունն էլ չի կարող խոչընդոտել նրան։

Չոպանյանն իր սքանչացումն է հայտնում նաեւ հայ գեղարվեստական տաղանդի եւս մեկ շքեղ ապացույցներից, Ֆրանսիայում հաստատված եւ եւրոպացի արվեստասերներից «ծովու նկարիչ» անվանված Վարդան Մախոխյանի գործի ու տաղանդի նկատմամբ։ Նա եւս, թեեւ իր կյանքի ծանրակշիռ մասն անց էր կացրել օտար միջավայրերում, էությամբ միշտ մնացել էր հայ՝ իր ստեղծագործ հինավուրց ժողովրդի հանդեպ խորին հարգանքով եւ գորովով լի։ Ֆրանսիայի ազգային շքանշանով պարգևատրված Մախոխյանի նկարների մասին ֆրանսիացի քննադատների հոգվածներից մեջբերված հատվածներում, որոնցում հաճախ հիշատակ-

<sup>19</sup> Տէս Ա. ԱՂԱՍՅԱՆ, Մի էջ ֆրանսահայ կերպարվեստի պատմությունից. Արմինիա Կարբոնել-Բաբայան, Պատմա-բանասիրական հանդես, Երեւան, 2001, № 1, էջ 98։ Ի դեպ՝ Ա. Բաբայանի՝ Ա. Չոպանյանի պատկերով արված դիմանկարը պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում. տէս Ա. ԱՂԱՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 102։

<sup>20</sup> Տէս Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Մեր արուեստագէտները. տիկին Արմենիա Բաբայան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.—հոկտ., թիւ 3, էջ 85—97։

<sup>21</sup> Տէս Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Մեր արուեստագէտները. Տիկին Արմինիա Բաբայան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.—հոկտ., թիւ 3, էջ 95։

վում է նկարչի ազգությունը, ընդգծվում են նրա արվեստի քնարականությունն ու ինքնատիպությունը<sup>22</sup>։

Եւրոպական մամուլից քաղված հոդվածների թարգմանությամբ «Անահիտը» ներկայացնում է նաեւ մեծատաղանդ երգչուհի, նույնպես փարիզաբնակ Մարգարիտ Բաբայանին<sup>23</sup>, արվեստաբան, արեւելագետ Արմենակ Սազըզյանին, որի մասին հոդվածներ էին տպագրվել ինչպես անգլիական, այնպես եւ գերմանական ու փարիզյան նշանավոր հանդեսներում, որոնցից եւս մեջբերումներ կան<sup>24</sup>։ Ֆրանսիական մամուլից մեջբերված քաղվածքների շնորհիվ Չոպանյանը ցույց է տալիս նաեւ այն ջերմ ու խանդավառ ընդունելությունը, որ Փարիզը արժանացրել է Վահրամ Փափազյանին, գնահատել անվանի դերասանի արտակարգ տաղանդը<sup>25</sup>։

Ամերիկահայերից Չոպանյանը մասնավորապես արժեւորում է օպերային տենոր երգիչ-դերասան Արման Թոքաթյանին<sup>26</sup>, կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանին եւ գծանկարիչ Մելքոն Քեպապճյանին՝ «իբր արուեստագիտական մեծ տաղանդներ», որոնք, իրենց հայտնությամբ հույս ներշնչելով մեր ժողովրդին, նաեւ լուսավորել են հայ մտավոր կյանքի հորիզոնը<sup>27</sup>։ Արտասահմանյան տարբեր հանդեսներից մեջբերված գովերգական արտահայտություններից հետո Չոպանյանը Մամուլյանի մասին հպարտորեն գրում է. «Իր տաղանդին կազմաւորիչ միջավայրը ռուսական է եղած, միջավայրն ուր այդ տաղանդը իր անձնական բնաշրջման կատարը կը բարձրանայ՝ ամերիկեան է, բայց ինքն իսկ տաղանդը՝ մեր ցեղէն բղխած է, եւ մեր իրաւունքն է մեր ցեղին վերագրել աղբիւրը մտա-

<sup>22</sup> Տէս Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 101-105։ Վ. Մախոխյանի մասին տէս նաեւ Ռաֆայել Շիշմանյանի ճառը՝ արտասանված նկարչի մահվան կապակցութեամբ. Ռ. Շիշմանյան, Նկարիչ Վ. Մախոխեան, «Անահիտ», Փարիզ, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 69-74։

<sup>23</sup> Տէս Ա. Չօպանեան, Մեր արուեստագէտներն արտասահմանի մէջ, Օրիորդ Մարգարիտ Բաբայեան.- Տիկին Ռօզ Պատմագրեան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 124-126։ Օրիորդ Մարգարիտ Բաբայանի մասին տէս նաեւ Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, 1931, էջ 172-173։

<sup>24</sup> Տէս Ա. Չօպանեան, Մեր մտաւորականներն ու արուեստագէտները արտասահմանի մէջ, «Անահիտ», Փարիզ, 1930, մարտ-ապրիլ, թիւ 6, էջ 117-118։

<sup>25</sup> Տէս Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 178-179։ Նաեւ՝ Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932 - ապրիլ 1933, թիւ 3-6, էջ 217-218։

<sup>26</sup> Տէս Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, սեպտ.-դեկտ., թիւ 1-2, էջ 163։

<sup>27</sup> Տէս Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 89-92։



ւոր ուժին, որ կը յայտնուի այդ երիտասարդին մէջ, որ արդէն իր Հայ ըլլալը ամենուն կը յայտարարէ որոշապէս»<sup>28</sup>։

Ուշագրավ է, որ Մամուլյանն իրեն վերագրված արժանիքներին ակունքներում տեսնում էր երկու իրողութիւն. մեկը՝ հայ ազգը, որից նա քաղել էր իր ներշնչանքները, երկրորդը՝ մորը, որը՝ որպէս դերասանուհի, քաջալերել էր որդու թատերական հակումները։ Հարազատ ազգի հանդեպ ունեցած այդ ազնիվ ու ճշմարիտ պահվածքը դրվատելով՝ Չոպանյանը վկայում է. «Մամուլեան, հասնելէ յետոյ իր ճիւղին մէջ ամենաբարձր յաջողութեանց որոնց կարելի է հասնիլ, ոչ միայն ամեն առիթով ամեն տեղ աղաղակած է իր Հայ ըլլալը, այլ հայկական հաւաքոյթներու մէջ քանիցս յայտնած է, թէ ինչ որ ինքը կրցած է ընել՝ կը պարտի էն առաջ իր ցեղին, իր արիւնին, որուն մէջ հին քաղաքակրթութեան մը գանձերը կան»<sup>29</sup>։

Արտասահմանում ապրող մանավանդ հայ նոր սերնդի ուժանալու եւ տարասերվելու վտանգը գուշակելով ու նաեւ տեսնելով՝ Չոպանյանը ցանկանում է Մամուլյանի օրինակով աշխարհով մեկ ցրված հայրենակիցների մեջ դաստիարակել գիտակցված ազգասիրութիւն, հարազատ ժողովրդի նկատմամբ հարգանք եւ հավատարմութիւն։

Այս դիրքից ամենեւին պատահական չէ Չոպանյանի քննադատութիւնն ուղղված ծագումով հայ այն արվեստագետներին, որոնք, առնելով ճանաչում, երբեմն նաեւ համաշխարհային հռչակ, օտար մեծ ազգերի քաղաքակրթութեան փայլով հրապուրված, իրենց ժողովրդին շատ անշուք տեսնելու ձգտող, մոռանում էին իրենց ազգը, փոխում իրենց անունը՝ ներկայանալով այլազգի, ինչպէս դա արել էր պարարվեստի երիտասարդ վարպետ ոմն Հրանտ Մուրադյան։ Որքան էլ Չոպանյանը մեծարում է նրան՝ ֆրանսիական մամուլից թարգմանաբար մեջբերված քաղվածքներով հաստատում նրա փայլուն հաջողութիւնները, այնուամենայնիվ վերջինս իրեն ռուս ներկայացնելը համարում է մեղք. «Ատիկա յանցանք մըն է ցեղին դէմ, որ իրենց տուեր է այդ ձիրքը,— զայրացած

<sup>28</sup> Անդ, թիւ 1, էջ 90։ Հանճարեղ հայ բեմադրչի վերաբերյալ խանդավառ գնահատանքի խոսքեր ամերիկյան մամուլի էջերից Ա. Չոպանյանը մեջբերում է նաեւ «Անահիտի»՝ 1930 թ. 6-րդ համարում (Մեր մտաւորականներն ու արուեստագէտները արտասահմանի մէջ, մարտ—ապրիլ, էջ 121—123)։ Չոպանյանի՝ Ռ. Մամուլյանի մասին ոգեշունչ գնահատականները տես Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս—հոկտ., թիւ 1—2, էջ 171—172։

<sup>29</sup> Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, յուլիս—դեկտ., թիւ 5—6, էջ 87։

գրում է Չոպանյանը եւ ցավով վկայում:— Այդ յանցանքը, մեր ժողովրդին իր քաղաքական գործընթացին ու անկախութենէն զրկելէն յետոյ՝ դարեւորու ընթացքին շատ մը հին հայ արուեստագէտներ գործած են... Պետք չէ այդ յանցանքը այլեւս գործուի»<sup>30</sup>,— վերջում եզրակացնում է ազգանվեր գործիչը: Չոպանյանի խոսքն անողոք է նաեւ Մայքլ Արլենի, առավել եւս դատաւիետող՝ Միշել Տրուայայի նկատմամբ, որ, լինելով տաղանդավոր վիպասան եւ գրական քննադատ, թաքցրել էր իր հայկական ծագումը եւ նախընտրել ներկայանալ ռուս կամ չեքքեզ<sup>31</sup>:

Իսկ անդրադառնալով «տաղանդաւոր զարգանկարիչ»<sup>32</sup> Մելքոն Քեպապճյանին՝ Չոպանյանը նրան բնութագրում է որպէս «խորապէս ու բնականօրէն արդիական ու խորհրդապաշտ, էականապէս բանաստեղծ խառնուածք, անսպառ ու ազնուական քմայքով մը հարուստ ստեղծագործող միտք»<sup>33</sup>: Ի դեպ՝ Քեպապճյանը վերսկսված «Անահիտի» «գմայլելի» զարգանկար-ճակատագրադերի հեղինակն է՝ բացի 1948 թ. երկու համարների եւ 1949 թ. եզակի համարի շապիկներից, որոնք գծագրել է փորագրանկարչուիթյան խոշորագույն վարպետ Էդգար Շահինը<sup>34</sup>: Նա

<sup>30</sup> Ա. ՉՕՊԱՆՅԱՆ, Հայ արուեստագէտներ, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1—2, էջ 70:

<sup>31</sup> ՏԵՆ Ա. ՉՕՊԱՆՅԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 64:

<sup>32</sup> Հայկ. կեանք, Նոր գնահատանք Քեպապճեանի, «Արեւ», Գահիրէ, 1930, 2 յունիս, թիւ 3446, էջ 2:

<sup>33</sup> Ա. ՉՕՊԱՆՅԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, 1929, էջ 93: Հետագայում եւս Ա. Չոպանյանն առիթ ունեցել է անդրադառնալու Մելքոն Քեպապճյանին՝ մասնավորապէս նրա Փարիզում կազմակերպված անհատական ցուցահանդեսի կապակցութեամբ՝ «Անահիտում» հրատարակելով ցուցահանդեսի ցուցակի համար հեղինակավոր գեղարվեստական քննադատ Գուստաւ Քանի գրած առաջաբանի թարգմանութիւնը, որին հաջորդում է նկարչի արվեստի մասին նյութորոշի քննադատ Գեղամ Խանամիրյանի վերլուծական հոդվածը՝ նկարչի մի քանի գործերի լուսանկարներով. տէս ԿՐԻՍՏՈՒՎ ՔԱՆ, Մելքոն Քեպապճեան, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 63—64, Գ. ԽԱՆԱՄԻՐՅԱՆ, Մելքոն Քեպապճեանի ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 64—71:

<sup>34</sup> Էդգար Շահինի մահվան կապակցութեամբ «Անահիտում» փոքրիկ հոդված է տպագրել մտերիմներից Լեւոն Կերտանը, որտեղ անվանի փորագրանկարիչը ներկայացվում է եւ որպէս արվեստագետ, եւ որպէս մարդ, որը, ինչպէս հեղինակն է փաստում, «Հպարտութեամբ կը յայտարարէր իր Հայութիւնը եւ իր յաջողութիւններուն փառքը կը վերադառնար մեր ազգին». տէս ԿԵՐՏԱՆ Լ., Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 7—9: Նկարչի՝ սեփական ազգի նկատմամբ ունեցած նույն վերաբերմունքը ընդգծում է եւ Ա. Չոպանյանը, տէս ՉՕՊԱՆՅԱՆ Ա., Երուանդ Մանուէլեան եւ Էտկար Շահին, «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտեմբեր, թիւ 2, էջ 8: Իսկ Ա. Չոպանյանի եւ Էդ. Շահինի հարաբերութիւնների մասին տէս ԴԱՆԼԱՔՅԱՆ Կ., Արշակ Չոպանյան, Երեւան, «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 270—273:

նկարազարդել է նաեւ ժամանակի ֆրանսիացի շատ նշանավոր գրողներին՝ այդ թվում նաեւ Անատոլ ֆրանսի գրքերից<sup>35</sup>։ Վերջինս, որ գծանկարել էր նաեւ «Անահիտ» հանդեսի առաջին շրջանի շապիկը՝ սկսած երրորդ համարից, օգտագործել է միջնադարյան հայ ձեռագրերի խորանների ու անվանաթերթի զարդանկարչության եւ թռչնազիր տառերի մանրամասները։ Իսկ Մելքոն Քեպապճյանի նկարազարդումն առանձնանում է գրականության, կերպարվեստի ու երաժշտության խորհրդապատկերների համագրությունամբ։

Նորաստեղծ «Անահիտի» տարբեր համարներում երկու նկարիչների գործերից կարելի է հանդիպել բազմաթիվ արտատպումների։ Վերատպություններ կան նաեւ ծնունդով եգիպտահայ Տիգրան Փոլատից, որը, աշակերտելով էդգար Շահինին, ոչ միայն ֆրանսիայում, այլեւ ողջ Եւրոպայում ձեռք էր բերել նրբաճաշակ, «սեպհական տոնմիկ ոճն ունեցող» արվեստագետի հատկանիշներ՝ իր մասնագիտական բարձր հատկանիշներով կանգնելով ժամանակի հայ եւ եւրոպացի լավագույն նկարիչների շարքում։ Նրա փորագրանկարներով են նկարազարդվել Անատոլ ֆրանսի «Սենտ Քլեոի ջրհորը», Պիեռ Շենի «Առնետի հուշատետրը», Լաֆոնտենի «Առակաների» ժողովածուն եւ այլ գրքեր, որոնցում «ան ցոյց տուած է նրբախոյզ տաղանդ մը, ըմբռնողական ճկուն միտք մը եւ արտայայտման ձիրքեր ու շնորհն ու փափկութիւնը զսպուած կորովի մը կը միանան»<sup>36</sup>, գրում է Զոպանյանը։ Շատ արվեստագետներ են նկարազարդել Լաֆոնտենի այդ գիրքը, սակայն, ըստ խմբագրի, պարզվում է, Փոլատին է մասնավորապես հաջողվել առակաների դերակատար կենդանիներին պատկերել այնպես, որ նրանք իրենց դեմքով, հագուստով եւ հոգով հարազատորեն խորհրդանշեն մարդկային այն կերպարներին, որոնց այլաբանորեն փոխարինում են։ Իր բնութագրումները Զոպանյանը լրացնում եւ հաստատում է ֆրանսիական մամուլի էջերում նկարչի մասին բնորոշումներով, ինչպես նաեւ գրքի առաջաբանի հեղինակ, ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամներից մեկի

<sup>35</sup> Տե՛ս ԶՕՊԱՆԵԱՆ Ա., Երուանդ Մանուէլեան եւ էտկար Շահին «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 8։ Նույն տեղում տե՛ս նաեւ օտարազգի արվեստաբանների գնահատականները է. Շահինի արվեստի մասին, ԶՕՊԱՆԵԱՆ Ա., Երուանդ Մանուէլեան եւ էտկար Շահին «Անահիտ», Փարիզ, 1948, օգոստ.-դեկտ., թիւ 2, էջ 9–11։

<sup>36</sup> ԶՕՊԱՆԵԱՆ Ա., Տիգրան Փոլատ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 3, էջ 87։

«մեծարժեք» գնահատականներով<sup>37</sup>, որոնք թարգմանել է ինքը: Օրինակ՝ «L'Europe Nouvelle» շաբաթաթերթում արվեստի տեսաբանը գրում է. «Եւ ինչ անթերի փորագրիչ, այս Փօլատը: Կը վերգտնենք հոս Մուկի մը յուշագրին ճարտարութիւնները, գիւտերը, փափկութիւնները: Մէկ խօսքով՝ շատ գեղեցիկ գիրք մըն է ասիկա, լաւագոյններէն մին, եթէ ոչ լաւագոյնը՝ այս տարեվերջին»<sup>38</sup>: Դժվար չէ գուշակել Չոպանյանի միտքը. ֆրանսիական գեղարվեստական քննադատության որակումներով նաեւ հաստատել Փոլատի փորագրանկարչական արվեստի տեղը եւրոպական կերպարվեստի զարգացման մակարդակում:

Ճանաչողական, ինչպես եւ գիտական մեծ արժեք ունեին նաեւ «Անահիտում» տպագրված այն հոդվածները, որոնցում ցույց էր տրվում հայերի՝ տարբեր ժամանակներում աշխարհի զանազան երկրների գեղարվեստական խոսքում ունեցած դերը: Դրանցում ընդգծվում են ոչ միայն հայոց գեղարվեստական մտքի համաշխարհային առնչությունները, այլեւ հայկական ոճի առանձնահատկությունները<sup>39</sup>:

Հանդեսի արվեստի բաժնին աշխատակցում էին հայ եւ համաշխարհային մշակույթի բազմաթիվ ականավոր ու պատկառելի դեմքեր, ինչպես, օրինակ, գրող, գրականագետ, արվեստաբան Արամ Երեմյանը (Երեւան), որի հանրամատչելի, տեղեկատվական հոդվածներն ավելի հաճախ «Հայաստանի նկարիչները» (նաեւ՝ «Խորհրդային Հայաստանի նկարիչները») ընդհանուր խորագրով արտասահմանի հայությունը հակիրճ ներկայացնում էին տաղանդավոր նկարիչներ Մարտիրոս Սարյանի<sup>40</sup>, Գաբրիել

<sup>37</sup> Տէս ԼՈՒԻ ՊԱՐԹՈՒ, Պ. Ժան տը Լա Ֆօնթէնի ստուերին, դժխքին մէջ՝ Եղիւսէան դաշտերը, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր–հոկտեմբեր, թիւ 3, էջ 98:

<sup>38</sup> Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Տիգրան Փօլատ, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր–հոկտեմբեր, թիւ 3, էջ 90:

<sup>39</sup> Տէս Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Հայերու գեղարուեստական գործունէութիւնը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ սուլթաններու օրով (շարունակելի), «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932 – ապրիլ 1933, թիւ 3–6, էջ 21–28: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Հայերու գեղարուեստական գործունէութիւնը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ սուլթաններու օրով (շար.), Փարիզ, 1933, յուլիս–սեպտեմբեր, թիւ 1–2, էջ 26–36 (մնացեալը՝ յաջորդ թիւով): Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Հայերու գեղարուեստական գործունէութիւնը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ սուլթաններու օրով (շար. եւ վերջ), Փարիզ, 1933, հոկտեմբեր–դեկտեմբեր, թիւ 3–4, էջ 32–36: ՊՐՈՆՆԻՍԼԱՎԱ ՎՈՒՅՉԵԲ ՔԷՕՓՐԻԼԵԱՆ, Լեհաստանի հայ պատմական յիշատակարաններու ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932 – ապրիլ 1933, թիւ 3–6, էջ 38–53:

<sup>40</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Հայաստանի նկարիչներ. 1.– Մարտիրոս Սարեան, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս–յունիս, թիւ 1, էջ 20–22: Ի դեպ՝ նույն համարի 21-րդ էջում տպագրված է Ա. Չոպանյանի դիմանկարը «Կենդանագիր Ա. Զ.ի» (Փարիզ, 1927). Նկար՝ Մարտիրոս Սարեան:

Գյուրջյանի<sup>41</sup>, Սեդրակ Առաքելյանի<sup>42</sup>, Անուշ Սաֆինյանի<sup>43</sup>, Հակոբ Կոչոյանի<sup>44</sup>, Վահրամ Գալֆեճյանի<sup>45</sup>, Ստեփան Աղաջանյանի<sup>46</sup>, Նղիշ Թադեոսյանի<sup>47</sup>, «Կովկասահայ առաջին արձանագործուհի» Այծեմնիկ Ուրարտու Քոչարյանի<sup>48</sup> եւ այլ արվեստագետներին՝ կից վերատպելով նրանց նշանակալից գործերից բազմաթիվ նմուշներ։ Հստ ամենայնի ուշագրավ են նաեւ Ա. Երեմյանի՝ Նոր Զուղայի նկարչական արվեստին նվիրված հոդվածները՝ բազմաթիվ որմնանկարների արտատպումներով<sup>49</sup>։

Աշխատակիցների թվում էին նաեւ անվանի հայագետ, արվեստաբան Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը (Փարիզ, էջմիածին)<sup>50</sup>, Գեղամ

նի» մականորությամբ. տե՛ս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Հայաստանի նկարիչներ. 1.— Մարտիրոս Սարեան, «Անահիտ», Փարիզ, 1930, մայիս—յունիս, թիւ 1, էջ 23։

<sup>41</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Հայաստանի նկարիչներ. 2.— Գաբրիէլ Գիւրջեան, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս—օգոստոս, թիւ 2, էջ 24—25։

<sup>42</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Խորհրդային Հայաստանի նկարիչները. 3.— Սեդրակ Առաքելեան, «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.—հոկտ., թիւ 3, էջ 16։

<sup>43</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Խորհրդային Հայաստանի նկարիչները, 4.— Անուշ Սաֆինեան, «Անահիտ», Փարիզ, յունուար—ապրիլ, թիւ 5—6, էջ 63—65։

<sup>44</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Խորհրդային Հայաստանի նկարիչները, 4. Յակոբ Կոչոյեան, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս—օգոստոս, թիւ 1—2, էջ 7։

<sup>45</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Խորհրդային Հայաստանի նկարիչները. Վահրամ Գալֆեճեան, «Անահիտ», Փարիզ, 1932, յուլիս—հոկտեմբեր, թիւ 1—2, էջ 27։

<sup>46</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Հայաստանի նկարիչները. Ստեփան Աղաջանեան, «Անահիտ», Փարիզ, 1932, նոյեմբեր 1932 — ապրիլ 1933, թիւ 3—6, էջ 14։

<sup>47</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Ե. Թադէոսեան, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար—փետրուար, թիւ 1—2, էջ 17—22։ Նույն համարում Ե. Թադէոսյանի տաղանդը գնահատել է նաեւ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը. տե՛ս ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Նղիշ Թադէոսեանի էտիւդների ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար—փետրուար, թիւ 1—2, էջ 23—28։

<sup>48</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Արձանագործ Այծեմնիկ Ուրարտու Քոչարեան, «Անահիտ», Փարիզ, 1936, յունիս—օգոստոս, թիւ 4, էջ 58—62։

<sup>49</sup> Տէս Ա. ԵՐԵՄԵԱՆ, Նկարիչ Մինասի կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական գծերը (մնացեալը՝ յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1938, մայիս—օգոստոս, թիւ 4, 1938, էջ 32—60։ Ա. ԵՐԵՄԵԱՆ, Նկարիչ Մինասի կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական գծերը (շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1938, սեպտ.—դեկտեմբեր, թիւ 5—6, էջ 44—63։ Ա. ԵՐԵՄԵԱՆ, Նորագիւտ էջեր Նոր Զուղայի որմնանկարչութիւնից, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար—փետրուար—մարտ, թիւ 1—2, էջ 24—32։ Ա. ԵՐԵՄԵԱՆ, Փշրանքներ Նոր Զուղայի Աէֆէլեան արուեստից, «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար—յուլիս, թիւ 1, էջ 23—25։

<sup>50</sup> Տէս Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Լեւոն Գ.ի սաղմոսարանի մանրանկարչութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս—օգոստոս, թիւ 2, էջ 5—6։ Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Սեւանի Առաքելոց վանքին հարաւային դուռը, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար—յունիս, թիւ 5—6, էջ 25—41։ Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Նղիշ Թադէոսեանի էտիւդների ցուցահանդէսը, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար—փետրուար, թիւ 1—2, 1935, էջ 23—28։ Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, էջմիածնի մեծ խորանի ասեղնագործ վարագոյրը, «Անահիտ», Փարիզ, 1935, մարտ—մայիս, թիւ 3—4, էջ 20—24։

հանամիրյանը (Նյու Յորք)<sup>51</sup>, նկարիչ, արվեստաբան Ռափայել Շիշմանյանը (Փարիզ)<sup>52</sup>, երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը (Փարիզ)<sup>53</sup>, պատմաբան, բանասեր, արվեստաբան Հարություն Քյուրդյանը (Ուիչիտո, ԱՄՆ)<sup>54</sup>, արվեստաբան, արեւելագետ Արմենակ Սազրզյանը (Կոստանդնուպոլիս)<sup>55</sup>, ֆրանսահայ նկարիչ Զարեհ Մութաֆյանը<sup>56</sup> եւ շատ ուրիշներ:

Ուշագրավ է, որ «Անահիտ» խմբագիրը թարգմանաբար հայ արվեստի մասին տպագրում է նաեւ օտարազգի հեղինակների ուսումնասիրություններ, հոգվածներ կամ հատվածներ դրանցից՝ ձգտելով հատկապես նրանց միջնորդությունը եւ հեղինակությունը հաստատել մեր մշակույթի ինքնատիպությունը, ինքնուրույնությունն ու վաղնջականությունը, ինչպես նաեւ գեղարվեստական բարձր ճաշակի արտահայտությունը:

<sup>51</sup> Գ. ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, Մելգոն Քէլապաճեանի արուեստը «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս-օգոստոս, թիւ 2, էջ 65-72:

<sup>52</sup> ՏԵՆ Ռ. ՇԻՇՄԱՆԵԱՆ, Անթուան Պուրտէլ (վերջը՝ յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 19-30, Ռ. ՇԻՇՄԱՆԵԱՆ, Անթուան Պուրտէլ (շար.), «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 13-20: Ռ. ՇԻՇՄԱՆԵԱՆ, Նկարիչ Վ. Մախոսեան, Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 69-74:

<sup>53</sup> ՏԵՆ Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ, Հայ ժողովրդական երգը, «Անահիտ», Փարիզ, 1930, նոյեմ.-դեկտ., թիւ 4, էջ 28-39:

<sup>54</sup> ՏԵՆ Յ. ՔԻՐՏԵԱՆ, Նիւթեր հայ երաժշտութեան պատմութեան համար. Երաժշտութեան մասին երկու հատուածներ Նախնեաց մատենագրութենէն, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 30-34: Յ. ՔԻՐՏԵԱՆ, Նիւթեր հայ գեղարուեստի պատմութեան համար. Իգնատիոս մանրանկարիչ, «Անահիտ», Փարիզ, 1939, ապրիլ-մայիս, թիւ 3, էջ 32-44: Յ. ՔԻՐՏԵԱՆ, Կղեմէս ԺԱ. Պապը եւ Իսրայէլ Օրի, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս-դեկտեմբեր, թիւ 2, էջ 28-35: Յ. ՔԻՐՏԵԱՆ, Հայ ազատագրական պատմութենէն նոր էջ մը եւ Միքէլանճելօ Քօրայ, «Անահիտ», Փարիզ, 1948, յունուար-յուլիս, թիւ 1, էջ 53-64: Յ. ՔԻՐՏԵԱՆ, Նոր նիւթեր Իսրայէլ Օրիի մասին, «Անահիտ», Փարիզ, 1949, յունուար-յունիս, թիւ 1, էջ 11-22:

<sup>55</sup> ՏԵՆ Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Մարաջախտ Աւշինի անունով 1274ի՞ն գրուած հայերէն Աւետարանին լուսագարդութիւնը (շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1935, հոկտ.-դեկտեմբեր, թիւ 6, էջ 18-26: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Մարաջախտ Աւշինի անունով 1274ի՞ն գրուած հայերէն Աւետարանին լուսագարդութիւնը (շար. եւ վերջ), «Անահիտ», 1936, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 4-13: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Յիշատակներ Կոստանդնուպոլսէն (շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1936, սեպտ.-հոկտ., թիւ 5-6, էջ 10-17: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Յիշատակներ Կ. Պոլսէն. Բ. (շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 33-40: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Յիշատակներ Կ. Պոլսէն (շար. եւ վերջ), «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 34-42: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Հայկական գորգեր, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 34-36:

<sup>56</sup> Զ. ՄՈՒԹԱՅԵԱՆ, Նկարչութեան ձգտումները (մնացեալը՝ յաջորդ թիւով), «Անահիտ», Փարիզ, 1938, յունուար-ապրիլ, թիւ 1-3, էջ 51-58: Զ. ՄՈՒԹԱՅԵԱՆ, Նկարչութեան ձգտումները. Բ. (շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2, էջ 35-41:

Այսպես, օրինակ, անվանի երաժշտագետ ժյուլեն Թիերսոյի «Encyclopédie de la Musique et Dictionnaire du Conservatoire» աշխատությունից հայ ժողովրդական երաժշտությանը հատկացված հատվածում կարդում ենք. «Քրիստոնէութիւնն ընդգրկող առաջին ժողովուրդներէն մին եղած ըլլալով, ան (հայ ժողովուրդը.— Վ. Ա.) իրեն համար կազմած է եկեղեցական երգեցողութիւն մը այնքան հին, եթէ ոչ աւելի, որքան բիւզանդականն ու հռոմէականը, ու բոլորովին անկախ: ...երաժշտութիւնը ամեն ժամանակ, դարերու ընթացքին, իր բոլոր ձեւերով մշակուած է Հայաստանի մէջ: Հայերը մեծ երգողներ են: Այդ կարողութիւնը այսօր ալ չեն կորսնցուցած»<sup>57</sup>:

Իսկ բյուզանդական երաժշտության հայտնի մասնագետ Պ. Ա. Կասսուբուեի «Հայաստան եւ իր աւանդական արուեստը» հոդվածում հայ հին ու ներկա երաժշտության վերաբերյալ ընդհանուր տեսությունից Չոպանյանը շահեկան է համարում հատկապես այն կարծիքը, որը դարձյալ ընդգծվում է մեր երաժշտության մեղեդայնության յուրահատկությունն ու ճոխությունը<sup>58</sup>:

Հետաքրքիր է նաեւ գերմանացի երաժիշտ-երգահան, ժողովրդական երգերի մասնագետ Ալորիս Մելիշարի հիացական վերաբերմունքը հայ երաժշտության վերաբերմամբ<sup>59</sup>: Զի կարելի չհիշատակել նաեւ Ֆրանսիացի երաժշտագետ Լուի Լալուայի<sup>60</sup> խանդավառ զմայլանքը հայ ժողովրդական երգով ու երաժշտությամբ: Կոմիտասի՝ 1906 թ. Փարիզում կայացած համերգից հետո մայրաքաղաքի երաժշտական թերթերից մեկում՝ «Le Mercure Musical»-ում, նա ծավալուն հոդված է նվիրում Կոմիտասին՝ արժեւորելով նաեւ հայ ժողովրդական երաժշտությունը, որ, ըստ նրա, «իրապէս ո՛չ եւրոպական է եւ ո՛չ արեւելեան, այլ ունի նկարագիր մը՝ շնորհալի քաղցրութեան, խորաթափանց յուզման եւ ազնուական գորովի: Փափուկ

<sup>57</sup> ԺԻԼԻԷՆ ԹԻԵՐՍՕ, Հայ երաժշտութիւն, «Անահիտ», Փարիզ, 1929, յուլիս—օգոստոս, թիւ 2, էջ 114:

<sup>58</sup> ՏԵՆ ԿԱՍՍՈՒԵ, Հայ երաժշտութեան մասին, «Անահիտ», Փարիզ, 1929, սեպտեմբեր, թիւ 3, էջ 121—122:

<sup>59</sup> ՏԵՆ ԱԼՕՐԻՍ ՄԵԼԻՇԱՐ, Երաժշտական տպաւորութիւններ Հայաստանի միջով ճանապարհորդելիս. Մի էջ հայ ժողովրդական երգի ուսումնասիրութեան համար (Թարգմանութիւն գերմաներէնից «Musikblätter des Anbruch»-էն, № 4, 1927, Vienne), «Անահիտ», Փարիզ, 1930, յուլիս—օգոստոս, թիւ 2, էջ 79—82:

<sup>60</sup> Լուի Լալուայի կինը դաշնակահարուհի Շուշանիկ Բաբայանն էր՝ հայտնի մանկավարժ Սոֆյա Բաբայանի դուստրն ու փարիզաբնակ հռչակյալ երգչուհի Շուշանիկ Բաբայանի քույրը. տէն Լ. ՍԱՀԱԿՅԱՆ, Կոմիտաս վարդապետը եւ Ֆրանսիական մշակույթը, «Կանթեղ» Գիտական հոդվածների ժողովածու, հտ. 3, 2016, էջ 254:



եւ սակայն որոշ ոլորտումներով մեղեգիներ, ճապուկ ու կենդանի կշռութիւններ, երաժշտութիւն մը որ ամբողջովին սրտէն կը բխդի եւ կը հոսի ինչպէս ջուր մը զով, թափանցիկ ու պայծառ: Արեւ կայ այդ երգերուն մէջ, բայց ոչ Արաբիոյ եւ Պարսկաստանի անապատներուն հրատոշոր արեւը, այլ ոսկեզօծ լույս մը, համակ երկնային, որուն ջերմութիւնը փայփայանք մըն է սարերու սպիտակութեան, անտառներու կանաչին եւ քաղցրակարկաջ առուններու ցոլքերուն»<sup>61</sup>:

Իսկ երբ Կոմիտասը համերգ է տալիս Ժնեւում եւ Լոզանում, տեղի թերթերը գրում են. «Հայ երաժշտութիւնը ոչ միայն մարդկային երաժշտութեան մէկ որոշ տարրն է, այլ եւ այնքան գեղեցիկ է ան, որ կրնայ նախանձը շարժել փարթամ Գերմանիային եւ խորոխտ Ֆրանսիային. ան կրնայ մեզի համար առաջնորդ մը ու իտէալ մը հանդիսանալ»<sup>62</sup>:

«Անահիտը» հայտնի մանկավարժ, երաժշտագետ, երգչուհի, Կոմիտասի մտերմուհի Մարգարիտ Բաբայանի (1874–1968)<sup>63</sup> առաջաբանով ու նրա թարգմանութեամբ 1935 թ. հունվար-փետրվարյան համարում տպագրում է նաեւ ռուս (ծագումով գերմանացի) հայտնի երգահան, խմբավար եւ դաշնակահար Թոմաս Հարտմանի (1885–1956) խորունկ ու ծավալուն դասախոսությունը Կոմիտասի մասին՝ կարդացված 1919 թ. Թիֆլիսում: Առաջիններից մեկը, որը բարձր է գնահատել Վարդապետի վաստակը, նրա բարձր ձիրքը եւ անգնահատելի ներդրումը հայկական երաժշտության պատմության մեջ, գրում է. «Այս օրուան երգահանդէս-դասախոսութեան նպատակներից միին է Կոմիտասին ներկայացնել ոչ միայն իբրեւ մի օժտուած երաժիշտ, այլ մի երգահան, որ քանքարի դրոշմն է կրում, եւ որի անունը ոսկի տառերով կ'արձանագրուի հայ երաժշտութեան պատմության էջերին մէջ: —Ես հաւատում եմ Հայ երաժշտութեան ապագային, որովհետեւ մի ազգ, որ ստեղծած է հայ երգը, մի ժողովուրդ, որի ձեռքն է եղած Պարսկաստանի երաժշտական կեանքը (յայտնի է, որ պարսիկ երաժիշտների մեծամասնութիւնը հայեր են

<sup>61</sup> Ա. ՉՊԱՆԵԱՆ, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս–օգոստոս, թիւ 1–2, էջ 113:

<sup>62</sup> Անդ, էջ 114–115:

<sup>63</sup> Մարգարիտ Բաբայանի՝ Կոմիտասի հետ մտերմության եւ նրա երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության գործում ունեցած դերի մասին տե՛ս Ն. ՎՈՍՏԱՆԳՅԱՆ, Մարգարիտ Բաբայանը եւ Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակութիւնը, «Կանթեղ», Երեւան, 2016, № 1, էջ 219–233:



եղած) – մի ժողովուրդ, որ երաժշտական անցեալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայէ մի շարք մեծ անուններ»<sup>64</sup>։

Ուշագրավ է, որ դասախոսութեան ընթացքին հեղինակը Կոմիտասի մասին իր որակումները խաչաձեւում է ժամանակակիցների գնահատանքի խոսքերով, որոնք առավել ամբողջացնում են մեր մեծ երգահանի դերն ու նշանակությունը։ Այսպես, օրինակ, Հարտմանը գրում է. «Յիշում եմ Պ. Զերէպինի (ռուս եւ ամերիկացի երգահան, դաշնակահար ու երաժշտության տեսաբան (1899–1977).– Վ. Ա.)<sup>65</sup> հիացմունքը՝ զննելիս նրա երկը, նրա բացազանշութիւնը՝ «Խնչպէս պիտի ուրախանար Մորիս Բավէլը (Ֆրանսիացի մեծայայտնի երգահան (1875–1937)<sup>66</sup>.– Վ. Ա.), լսելով այս երկերը»<sup>67</sup>։ Ապա հիշատակում է արեւմտյան երաժշտական մշակույթի ամենահեղինակավոր դեմքերի բարձր տպավորությունը «էջմիածնայ համեստ վանականին» եւ նրա արվեստի հանդեպ։

Մարգարիտ Բաբայանի թարգմանությամբ «Անահիտը» հաջորդ տարվա հունվար-մարտյան համարում տպագրել է նաեւ 1919 թ. Թ. Հարտմանի՝ հայ ժողովրդական երաժշտության եւ Կոմիտասի մասին Թիֆլիսում լույս տեսնող ռուսական մի թերթում տպված երկու շահեկան հոդվածները, որոնք լրացնում են նրա նախորդ բանախոսության նյութը<sup>68</sup>։

«Անահիտում» ուշագրավ է Գարեգին Լեւոնյանի՝ երկխոսության ձեւով կառուցված «Մի պտոյտ Երեւանի թանգարաններում» «շահեկան յօդուածը» (խմբ.– Վ. Ա.), որում հեղինակը Վենետիկից ժամանած իր բարեկամ, «հին բանուոր» սինեոր Ֆրանչո (Ֆրանչէսկո) Բիանկիի հետ իբրեւ

<sup>64</sup> Թոմաս Հարտման եւ Կոմիտաս Վարդապետ։ Դասախոսութիւն Կոմիտասի մասին կարգուցուած Թիֆլիզում 1919 թուին, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1–2, էջ 75։ Կոմիտասի գործի արժեւորման մասին Թ. Հարտմանի գնահատականների վերաբերյալ մանրամասն տես Ա. ԶԱՔԱՐՅԱՆ, Կոմիտասը Թոմաս Հարտմանի կյանքում եւ գործունեության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 2019, № 3, էջ 23–32։ Հոդվածի վերջում՝ կից, վերահրատարակվել է «Անահիտ» հանդեսում տպագրված հիշյալ դասախոսության նյութը. տես անդ, էջ 33–38։

<sup>65</sup> Տէս Է. Ա. АРИАС, Alexander Tcherepnin : a bio-bibliography, New York, 1989։

<sup>66</sup> Տէս Մ. ГОСС, Bolero. The Life of Maurice Ravel, Tudor Edition, New York, 1945։

<sup>67</sup> Թոմաս Հարտման եւ Կոմիտաս Վարդապետ։ Դասախոսութիւն Կոմիտասի մասին կարգուցուած Թիֆլիզում 1919 թուին, «Անահիտ», Փարիզ, 1935, յունուար-փետրուար, թիւ 1–2, էջ 75։

<sup>68</sup> Տէս Թ. ՀԱՐՏՄԱՆ, Ժողովրդական երգը եւ նրա հաւաքողները, «Անահիտ», Փարիզ, յունուար-մարտ, թիւ 1–2, էջ 22–33։ Հոդվածները տպագրվել են «Закавказское Слово» թերթում. տես Ա. ԶԱՔԱՐՅԱՆ, Կոմիտասը Թոմաս Հարտմանի կյանքում եւ գործունեության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 2019, № 3, էջ 25։

Թե շրջում է Երեւանով ու նրա թանգարաններով եւ իր հյուրին, ուրեմն եւ «Անահիտ» ընթերցողներին հակիրճ ծանոթացնում հայ հին ու միջնադարյան մշակույթին, գրողներից, նկարիչներից ու քանդակագործներից շատերին ու նրանց գործերին, խոսում ռուս եւ հայ նկարիչների ստեղծագործությունների մասին, բնութագրում նրանց արվեստը: Շարադրանքից բացի՝ կան Հովհ. Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոջոյանի, Վարդան Ախիկյանի, Փանոս Թերլեմեզյանի, Եղիշե Թադեւոսյանի բազմաթիվ նկարների, Արա Սարգսյանի, Սուրեն Ստեփանյանի եւ Այծեմնիկ Ուրարտու Քոչարյանի քանդակների լուսանկարներ<sup>69</sup>:

«Անահիտում» առանձնահատուկ տեղ էր հատկացվում նաեւ հայ գորգագործության գեղարվեստական ճարտարվեստին ու պատմությանը<sup>70</sup>:

Թատրոնի, երաժշտության, հոգեւոր մշակույթի այլազան բնագավառներին վերաբերող լուրջ ուսումնասիրությունների կողքին «Անահիտում» վերատպվում էին նաեւ իտալական Վերածննդի գործիչներից մինչեւ Ժամանակակից ֆրանսիական գեղանկարչության առաջնակարգ հեղինակների գործերը, ներկայացվում էին մեծ թվով ցուցահանդեսներ՝ հայ եւ համաշխարհային արվեստի կերտվածքների, գեղանկարչական ստեղծագործությունների ու փորագրանկարների, ինչպես նաեւ հոգեւոր եւ աշխարհիկ տարբեր կառույցների լուսանկարներով<sup>71</sup>:

«Անահիտում» տպագրված լուսանկարներն ունեցել են սկզբնաղբյուրի նշանակություն, քանի որ նրանցում վավերացված շինությունների մնացորդները, նրանց պատերի ու սյուների որմնանկարները չեն պահպանվել կամ մասամբ են փրկվել կորստից, ինչպես, օրինակ, Երեւանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին<sup>72</sup>, որի կիսափուլ շինվածքի եւ որմ-

<sup>69</sup> Տէս Գ. ԼԵՆՈՆԵԱՆ, Մի պտոյտ Երեւանի թանգարաններում, «Անահիտ», Փարիզ, 1937, յունուար-մարտ, թիւ 1-2, էջ 1-15: Անդ, ապրիլ-յունիս, թիւ 3-4, էջ 1-16:

<sup>70</sup> Տէս Յ. ՔԻՒՐՏԵԱՆ, Գորգաշինութիւնը հայոց մէջ (շարունակելի), «Անահիտ», Փարիզ, 1930, սեպտ.-հոկտ., թիւ 3, էջ 67-75: Յ. ՔԻՒՐՏԵԱՆ, Գորգաշինութիւնը հայոց մէջ (Բ. եւ վերջին մաս), «Անահիտ», Փարիզ, 1931, յունուար-ապրիլ, թիւ 5-6, էջ 118-128: Ա. ՍԱԳԸՋԵԱՆ, Հայկական գորգերը ԺԵ.ԷՖ ԺԹ. դար, «Անահիտ», Փարիզ, 1932, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 72-87:

<sup>71</sup> Տէս Մեծ արուեստագէտները. Օնոէ Տօմիէ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 33-35: Նաեւ Հայ հին արուեստ, «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, թիւ 1, էջ 56: Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Լվովի հայկական մայր եկեղեցին եւ Յովսէփ Թէոտորովիչ արքեպիսկոպոսին կատարած գործը, «Անահիտ», Փարիզ, 1929, նոյեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, էջ 44-56 եւ այլն:

<sup>72</sup> Այն քանդակ է 1931 թվականին: Քանդակու որոշումը՝ այդ տարածքի վրա հետագայում մեծ շինություն կառուցելու նպատակով, տրվել է նաեւ պրոֆեսոր Նիկողայոս Մառի սխալ ու հապճեպ կարծիքի հետեւությամբ: Նա հայտարարել էր, թե իբրեւ եկեղեցին գեղարվեստական

նանկարների ուսումնասիրության շնորհիվ, ինչպես հեղինակն է գրում, «Երեւան կը յայտնուի իբր հին եւ մշակոյթ ունեցող հայաքաղաք մը... եւ այսպէս քանդուող Պօղոս-Պետրոս եկեղեցին ցոյց կուտայ, որ Երեւանի մէջ 5–6րդ դարերուն կար ճարտարապետական նկատելի կերտուածք, քանդակագործութեան նմոյշներ, ու կը հաստատուի նաեւ ուրիշ տեղերէ միայն աւանդութեամբ ծանօթ՝ նկարչութեան անժխտելի (նիւթապէս, մինչեւ մեզի հասած նմոյշներով) գոյութիւնը հոն»<sup>73</sup>:

«Անահիտ» շուրջ համախմբված թե՛ հայ, թե՛ օտարազգի արվեստաբան-գիտնականների՝ տպագրած տեսական դրույթներն ու գեղագիտական հայացքները, նորահայտ երեւոյթների վերլուծական գնահատականներն ու ուսումնասիրություններն անշուշտ պետք է նպաստեն եւ հարկավ օժանդակել են մեզանում արվեստաբանական մտքի զարգացմանն ու առաջընթացին, ընթերցողին դաստիարակել գեղեցիկի գեղարվեստական գնահատման եւ արժեւորման ունակութեամբ:

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

«Անահիտ», Արշակ Չոպանյան, գեղարվեստ, արվեստագետ, քրոնիկ, բանախոսություն, ցուցահանդես, թարգմանություն, հայրենիք-սփյուռք:

## РЕЗЮМЕ

В статье рассматриваются художественное и научное содержание второго периода издания журнала «Анаит» (Париж, 1929–1941; 1946–1949). В ней представлены многочисленные выдающиеся деятели армянской и мировой культуры, сотрудничавшие с этим периодическим изданием, с особым вниманием к упоминаниям армянского искусства.

ու պատմական տեսակետից որեւէ արժեք չի ներկայացնում. այդ մասին տե՛ս Յ. ՔԻՐՏԵԱՆ, Հայ գեղարուեստի պատմութեան համար. Նորագիւտ հին որմնանկարներ Երեւանի Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցւոյն, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932 – ապրիլ 1933, թիւ 3–6, էջ 63:

<sup>73</sup> Յ. ՔԻՐՏԵԱՆ, Հայ գեղարուեստի պատմութեան համար. Նորագիւտ հին որմնանկարներ Երեւանի Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցւոյն, «Անահիտ», Փարիզ, նոյեմբեր 1932 – ապրիլ 1933, թիւ 3–6, էջ 62:

Редактор «Анаит» Аршак Чопанян рассматривал искусство как нечто, стоящее выше политических и социальных конфликтов. Он видел в нём мощную объединяющую силу для цивилизованных народов и, что особенно важно для армянского народа, средство обеспечения жизнеспособности и выживания. Журнал ставил перед собой задачу способствовать культурным связям между армянской диаспорой и родиной, уделяя равное внимание творческим процессам как в среде диаспоры, так и среди армян, проживающих в Армении, включая новых, только начинающих художников. Популяризация армянского искусства осуществлялась не только посредством переводов историко-критических работ европейских авторов, восхищавшихся как древним, так и современным армянским искусством, но и через раскрытие международных связей армянского художественного гения. В обзорах журнала подчёркивались уникальные черты армянского искусства, его место на мировой художественной сцене и уровень его развития. «Анаит» также освещал роль армян в художественных процессах разных стран и исторических эпох, подчёркивая как глобальное влияние армянской художественной мысли, так и уникальные особенности армянского стиля. Значимость журнала «Анаит» проявляется в его роли как в представлении миру богатого культурного наследия Армении, так и в знакомстве армянских читателей с мировым искусством и художественными направлениями. Это влияние особенно заметно, учитывая широкую географию распространения журнала, особенно в регионах с многочисленными армянскими общинами. Одной из ключевых задач «Анаит» также являлось продвижение искусства советской Армении, с чем журнал блестяще справился, став важным звеном в его популяризации и осмыслении.

## SUMMARY

This article examines the artistic and scholarly content of the second period of the *Anahit* journal's publication (Paris, 1929–1941; 1946–1949). It presents numerous prominent figures from Armenian and global culture who contributed to this periodical, with particular attention to references to Armenian art. The editor of *Anahit*, Arshak Chopanyan, regarded art as an entity that transcends political and social conflicts. He perceived it as a powerful

unifying force for civilized nations and, of particular significance for the Armenian people, as a means of ensuring cultural vitality and survival. The journal sought to foster cultural ties between the Armenian diaspora and the homeland, dedicating equal attention to the creative processes both within the diaspora and among Armenians residing in Armenia, including emerging artists. The promotion of Armenian art was achieved not only through translations of historical and critical works by European authors who admired both ancient and modern Armenian art but also by revealing the international connections of Armenian artistic heritage. The journal's reviews underscored the distinctive characteristics of Armenian art, its position within the global artistic landscape, and its level of development. *Anahit* also explored the role of Armenians in artistic movements across various countries and historical periods, emphasizing both the global impact of Armenian artistic thought and the unique features of the Armenian style. The significance of *Anahit* lies in its dual role: presenting Armenia's rich cultural heritage to the world and acquainting Armenian readers with international art and artistic trends. This influence is particularly evident considering the magazine's extensive distribution, especially in regions with significant Armenian communities. One of the key objectives of *Anahit* was also the promotion of Soviet Armenian art, a task in which the journal excelled, serving as a crucial platform for its dissemination and intellectual engagement.

